ճզ.

Նա ևս Ֆրանսիզն և փարփիշտն միաբան են պատերազմին. դէմ նամսային կամենին Վենայ յափշտակել. Թագուհին պռէզպուրք նստեալ է վասն երկիւղին. նա ևս այժմ զէմին ոչ գոյ եր֊կիւղ ի կողմանէ տաճկին, զի անդ եղեալ զինուորքն հանեալ են, և յղեալ ընդդէմ պարսից։ (Հ. Յակոբ առ Մխիթար, յամին 1741 սեպտեմբերի 16, [տեղի?])։

ճէ.

Երեկոյեան օր, բաղրիքն[1] ծանուցումն արարեալ է ժողովրդեան ասելով, թէ ուղղափառաց վարդապետքն 60 քսակ դրամ տուեալ են, և առնլոցք լուսաւորչաց և սուրբ գնուլքայ ժամսն. ես այսուհետև ոչ կարեմ առնել զպատրիարքութիւն, որպէս գիտէք և ոչ կարմիք [պիտի ըլլայ «որպէս... կամիք»] արարէք։ Աբրահամ վարդապետն որ էր ի Հալէպ՝ զնա կաթուղիկոս արարեալ Հալէպու և մինչև ցայժմ 6 եպիսկոպոս ձեռնադրեալ է։ (Հ. Պօղոս վրդ. առ Մխիթար, յամին 1741 Հոկտ. 30, [Կ. Պոլիս?])։

ճը.

Աբրահամ վարդապետն, որ ի լեառն մառոնց՝ ի վերայ բերայ կաթուղիկոս եղեալ է. ևս վեց եպիսկոպոս ձեռնադրեալ է։ Նաև զայս լուր լուաք, զի էջմիածնայ կաթուղիկոսն պատճառ եղեալ է չէհրիմանցոց տալոյ զբազումս տուգանս վասն ուղղափառ հաւատոյ. ևս չէհրիմանցիք ցուցեալք են զինքեանս արդարս և զնա անիրաւս առաջի շահին. և ի շահէն արժանահաս պատիժ և պատուհաս եկեալ առ նա, զի զինքն և զամենայն միաբանսն նորին ի շխտայս եդեալք զնոսա տարեալք են ի խորին խորասանն։ Եւ այսպէս ևս լուայ, զի հալէպեցի ուղղափառքն մինչ ին֊քեամբք առին զմի եկեղեցի ի ներհակաց ի յերկրի իւրեանց, միջնորդութեամբ դատաւորաց՝ այլ և սստ առին զփէրման, զի ինքեամք դնիցեն իւրեանց զուղղափառ առաջնորդ. որպէս անդ եղեալ ուղղափառ յոյնք արարեալ են վաղուց։ Թէև հալէպցիք խնդրեցին ի պատրիարքէն և ինքն ոչ լուաւ նոցա, զի ինքն դնիցէր նոցա զուղղափառ առաջնորդ ըստ ում խնդրէին նոքա։ Եւ յետոյ ի ձեռն միջնորդաց ի վերայ գաղատիոյ։ Եւ ըստ այսմ երևի և ասի, թէ ուղղափառաց կամ տրի երկու եկեղեցի ի կոստանդինուպօլիս, կամ իւրաքանչիւրոց եկեղեցեաց կէսն. և կամ սիւնհաթոսիւ ի միասին ճարակիլ և միաբան լինիլ ներհակքն ընդ ուղղափառաց. և բնաւ այնուհետև ոչ գնալ ի յեկեղեցիս լաթանաց յազգէն մերմէ, որպէս զի մի ասիցի ի մէջ այլազգեաց, թէ հայք ֆռանկք եղեալ են։ (Հ. Պօղոս վրդ. առ Մխիթար, յամին 1741 Նոյեմբերի 15, [Կ. Պոլիս?])։

ճթ.

Դարձեալ ուրախացայ լսելով վասն Հայրապետին [առ Բենեդ. ԺԴ Քահանայապետ] մատու֊ցեալ ընծային[2], նոյն Հայրապետն օժարութեամբ ընդունի այդպիսի ընծայս, քանզի ես երբ հան֊դիպայ Պօլոնեայ, տեսի որ մեծ և գեղեցիկ գրքատուն մէ շինել կու տայ վասն հասարակի օգտութեան և իւր անուան մեծութեան. վասն որոյ բազում կարտինալք և մեծամեծք բազում և պատուական գրեանս ընծայեցին իւրեան. և ինքն զամենեսին պօլոնիա կու առաքէ... յաժմս նափօլու բազում ըսպանեօլ զինուորք զան փափի երկրէն անցանեն և գնան տեղն։ (Պատկերահան Ցռհանննէս առ Մխիթար, յամին 1742 փետր.ի 24, [Հռովմ])։

---

1. Յակոբ Նալեան Պատրիարք։
2. Կ'ակնարկէ Մխ. Աբբահօր տպած Աստուածաշունչը։